ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N <<ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/64-2>>

ք.Երևան «11» ապրիլի 2018թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Գ. Չթրյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 01.04.2015 թվականի թիվ 956-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<ՍՄԱԼԱ>> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Ավանեսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևանի Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի կողմից ներկայացված **Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջան Ն. Զարյան 15 շենքի հարակից տարածքի բարեկարգում աշխատանքները** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 **Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 2018թ հուլիսի 31-ը:**

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Յանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետում նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ,

ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **30** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար,

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում,

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն [illegible]

հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **5569886.0 (հինգ միլիոն հինգ հարյուր վաթսունինը հազար ութ հարյուր ութսունվեց)** ՀՀ դրամ, որից **928314.0 (ինն հարյուր քսանութ հազար երեք հարյուր տասնչորս) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող** բոլոր ծախսերը

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը :

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի

ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձևակերպել նախքան Հայաստանի Հանրապետության

սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8..15 Սույն պայմանագրով նախատեսնված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում **Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը:**

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրատու	**Կապալառու**
Երևանի քաղաքապետարան	«ՍՄԱԼԱ» ՍՊԸ
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1	Ք. Երևան, Ռուբինյանց 16/1 բն. 20
Կենտրոնական գանձապետարան	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900032313174	Հ/Հ 11500801319100
ՀՎՀՀ 02593108	ՀՎՀՀ 00848343
Գ. Զթրյան	Ա. Ավանեսյան .....
Ստորագրություն	Ստորագրություն
Կ.Տ	Կ. Տ

Հավելված թիվ 1
«11» ապրիլի 2018 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ << ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/64-2> գնման պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

Ք. Երևան Արաբկիր վարչական շրջան Ն. Զարյան 15 շենքի հարակից տարածքի բարեկարգում

Ծավալաթերթ-Նախահաշիվ

NN	Աշխատանքների անվանումը	չ/մ	ծավալը	Միավորի արժեքը /հազ դրամ/	Ընդամենը /հազ դրամ/
1	2	3	4		
	Շինարարական աշխատանքներ				
	Քանդման աշխատանքներ				
1	Եզրաքարերի բանդում բետոնանիվքով	գմ	25.00000	0.66700	16.67500
2	Հենապատի բանդում	մ³	2.00000	13.96600	27.93200
3	Ասֆալտաբետոն, ծածկույթի բանդում (202մ2)	մ²	8.08000	2.89400	23.38352
4	Խճի շերտի բանդում	մ³	10.10000	0.36800	3.71680
5	Մետաղական ցանկապատի ապամոնտաժում	գմ	39.00000	0.35600	13.88400
6	Մետաղական ճաղաշարի ապամոնտաժում	գմ	25.00000	0.35600	8.90000
7	Բետոնե սատիճանների բանդում	մ³	3.00000	11.98700	35.96100
8	d- 50մմ մետաղական խողովակաշարի ապամոնտաժում	գմ	40.00000	0.44400	17.76000
9	Շին աղբի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	50.17300	2.49200	125.03112
	Բարեկարգման աշխատանքներ				
10	2-րդ կարգի բնահողի մշակում էքսկավատորով, բարձելով ա/ինքնաթափերի վրա /հետ լիցքի համար/	մ³	19.00000	0.35500	6.74500

11	Բնահողի եզրագիծ ձեռքով	$մ^3$	19.00000	0.69700	13.24300
12	Խճի շերտի պատրաստում 5սմ հաստությամբ	$մ^2$	45.00000	0.61200	27.54000
13	Մանրահատիկ ասֆալտաբետոնե ծածկույթի պատրաստում 4սմ հաստությամբ	$մ^2$	45.00000	2.92100	131.44500
14	Խճի նախապատրաստական շերտի պատրաստում	$մ^3$	0.86000	9.24200	7.94812
15	Բետոնե եզրաքարերի տեղադրում բետոնե հիմքով 15x300մմ	գմ	43.00000	4.25300	182.87900
16	Խճի նախապատրաստական շերտի պատրաստում	$մ^3$	0.38000	9.24200	3.51196
17	80x200մմ կտրվածքի բետոնե եզրաքարերի տեղադրում բետոնե հիմքով /այդ թվում գրունտատաղավարի/	գմ	38.00000	3.82400	145.31200
18	Պատերի ց/ավազե սվաղ	$մ^2$	85.00000	1.61400	137.19000
19	Պատերի դեկորատիվ նկարազարդում	$մ^2$	85.00000	4.60100	391.08500
20	Խճի նախապատրաստական շերտի պատրաստում բետոնե գեղարվեստական սալիկների տակ	$մ^3$	9.37500	9.24200	86.64375
21	Բ-7.5 դասի բետոնից նախապատրաստական շերտ 7սմ հաստությամբ	$մ^3$	4.37500	23.12200	101.15875
22	5սմ հաստությամբ ց/ավազե տոր խառնուրդի պատրաստում բետոնե սալիկների տակ	$մ^3$	3.12500	8.58800	26.83750
23	Բետոնե գեղարվեստական սալիկներից հատակի պատրաստում /այդ թվում գրունտատաղավարի/	$մ^2$	62.50000	3.85200	240.75000
24	Բուսահողի բարձում ա/ինքնաթափերի վրա	$մ^3$	45.00000	1.64400	73.98000
25	Բուսահողի տեղափոխում 35 կմ հեռ	տն	54.00000	4.18900	226.20600
26	Բուսահողի փռում ձեռքով	$մ^2$	300.00000	0.27700	83.10000
27	Սիզամարգերի տեղադրում	$մ^2$	300.00000	0.12300	36.90000
28	Կապույտ ավազի փռում	$մ^3$	3.15000	5.29200	16.66980
29	Նստարանների տեղադրում ամրացումով	հատ	5.00000	3.61400	18.07000
30	Աղբաամանների տեղադրում ամրացումով	հատ	5.00000	1.80700	9.03500
31	Բ 15 դասի բետոնից բետոնե թարի պատրաստում	$մ^3$	0.40000	35.89900	14.35960
32	20x20x80սմ բազալտե ցայտաղբյուրի պատրաստում և տեղադրում	կ-տ	1.00000	68.74500	68.74500
33	Պոլիպրոպիլենային խողովակի անցկացում Φ25մմ, փորձարկումով	գմ	2.00000	0.49200	0.98400

34	Գոյություն պոլիվինիլքլորիդի խողովակների տեղադրում Φ50մմ, փորձարկումով	գմ	20.00000	0.43400	8.68000
35	Մանկական խաղերի, մարզասարքերի տեղադրում	հատ	4.00000	5.11900	20.47600
	Աստիճանի իրականացում /հանգույց 3/				
36	B-12.5 դասի բետոնով խամբարաբետոնե աստիճանների և ահրթակների պատրաստում	$մ^3$	0.70000	28.55800	19.99060
37	Միաձույլ ե/բետոնե աստիճանների և հարթակների պատրաստում 15 դասի բետոնից	$մ^3$	0.60000	32.67500	19.60500
38	40x4մմ անկյունակի տեղադրում	տն	0.00925	190.92300	1.76604
39	40x4մմ անկյունակի արժեքը	գմ	5.00000	0.90500	4.52500
40	Մետաղական սակերտությունների 2 շերտ լուղաներկում	տն	0.00925	23.07000	0.21340
41	Ամրանի արժեքը Φ6 A500c դասի	տն	0.00750	263.16400	1.97373
42	Ամրանի արժեքը Φ10 A500c դասի	տն	0.04000	263.16400	10.52656
43	Թերթապողպատի տեղադրում 80x80x6մմ, 4հատ	տն	0.00121	409.93600	0.49428
44	Բալթիրների տեղադրում 50x30x2.5մմ, 25x25x2մմ	գմ	2.20000	1.81900	4.00180
45	50x30x2.5մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	5.70000	0.98700	5.62590
46	25x25x2մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	4.10000	0.48900	2.00490
47	Մետաղական մասերի 2շերտ ներկում	$մ^2$	2.20000	0.83800	1.84360
	Աստիճանի իրականացում /հանգույց 4/				
48	B 12.5 դասի բետոնով խամբարաբետոնե աստիճանների և ահրթակների պատրաստում	$մ^3$	4.20000	28.55800	119.94360
49	Միաձույլ ե/բետոնե աստիճանների և հարթակների պատրաստում 15 դասի բետոնից	$մ^3$	1.00000	32.67500	32.67500
50	Ամրանի արժեքը Φ10 A500c դասի	տն	0.04000	263.16400	10.52656
51	Թերթապողպատի տեղադրում 80x80x6մմ, 6հատ	տն	0.00181	409.93600	0.74143
52	Բալթիրների տեղադրում 50x30x2.5մմ, 25x25x2մմ	գմ	6.20000	1.81900	11.27780
53	50x30x2.5մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	10.50000	0.98700	10.36350
54	25x25x2մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	9.50000	0.48900	4.64550

55	Մետաղական մասերի 2շերտ ներկում	$մ^2$	4.20000	0.83800	3.51960
	Աստիճանի իրականացում /հանգույց 5/				
56	B-12.5 դասի բետոնով խամբարաբետոնե աստիճանների և ահրթակների պատրաստում	$մ^3$	3.50000	28.55800	99.95300
57	Միաձույլ ե/բետոնե աստիճանների և հարթակների պատրաստում -15 դասի բետոնից	$մ^3$	1.00000	32.67500	32.67500
58	Ամրանի արմերը Φ10 A500c դասի	տն	0.04700	263.16400	12.36871
59	Թերթապողպատի տեղադրում 80x80x6մմ, 7հատ	տն	0.00211	409.93600	0.86500
60	Բազրիքների տեղադրում 50x30x2.5մմ, 25x25x2մմ	գմ	3.90000	1.81900	7.09410
61	50x30x2.5մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	7.50000	0.98700	7.40250
62	25x25x2մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	7.70000	0.48900	3.76530
63	Մետաղական մասերի 2շերտ ներկում	$մ^2$	4.00000	0.83800	3.35200
	Հենապատի բարձրացում				
64	Անցքերի շաղափում	հատ	140.00000	0.30000	42.00000
65	Խարսխաձողերի տեղադրում անցքերի մեջ Φ10 A500c դասի	տն	0.02030	287.51300	5.83651
66	Պոլյուսի շաղախի ներարկում անցքերի մեջ	$մ^3$	0.00500	490.63100	2.45316
67	Միաձույլ ե/բ հենապատերի պատրաստում B-15 դասի բետոնից	$մ^3$	4.70000	40.65600	191.08320
68	Ամրանի արմերը Φ10 A500c դասի	տն	0.03430	263.16400	9.02653
69	Հենապատի լավորակ գ/ավազե սվաղ ցանցով	$մ^2$	32.00000	2.52900	80.92800
70	Հենապատի ներկում, սաճկապատումով	$մ^2$	32.00000	0.59800	19.13600
	Տաղավարների պատրաստում և տեղադրում /3x2.5/մ 1հատ				
71	3 թվ կարգի բնահողի մշակում ձեռքով	$մ^3$	0.35000	3.10800	1.08780
72	Բնահողի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	0.64750	2.49200	1.61357
73	Միաձույլ ե/բ կետային հիմքերի պատրաստում B-15 դասի բետոնից	$մ^3$	0.35000	38.98400	13.64440
74	Ամրանի արմեգը A500c դասի	տն	0.08000	263.16400	21.05312

75	Զրուցատաղավարի պատրաստում /կանգնակներ 100x100x3մմ մետ խողովակներից, հենաններ 100x100x3մմ, տանիքային մաս 80x80x2մմ, կավարամած 30x30x1.5մմ, բազրիքաձողեր 30x30x1.5մմ/	տն	0.38000	54.79100	20.82058
76	100x100x3մմ մետ խողովակների արժեքը	գմ	22.20000	3.17400	70.46280
77	80x80x2մմ մետ խողովակների արժեքը	գմ	21.40000	1.76200	37.70680
78	30x30x1.5մմ մետ խողովակների արժեքը	գմ	58.00000	0.53600	31.08800
79	Պրոֆ /գունավոր/ թիթեղի ծածկույթի պատրաստում 0.5մմ հաստությամբ КП 21-0.5մմ	$մ^2$	12.00000	3.98300	47.79600
80	Մետաղական նստարան փայտե նստատեղերով	հատ	2.00000	3.61400	7.22800
81	Մետաղական սեղան /զրուցատաղավար/	հատ	1.00000	2.50900	2.50900
82	Զրուցատաղավարի մետաղական մասերի 2 շերտ յուղաներկում	$մ^2$	27.00000	0.83800	22.62600
	Մետաղական ճաղաշար 99գմ				
83	3 րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	$մ^3$	3.80000	3.10800	11.81040
84	Բնահողի ետիցքը ձեռքով	$մ^3$	1.82000	0.69700	1.26854
85	Ավելորդ բնահողի բարձում ա/թափքերի վրա և տեղափոխում 13կմ	տն	3.76200	2.49200	9.37490
86	Խճի շերտի պատրաստում	$մ^3$	0.92400	9.24200	8.53961
87	Կետային հիմքերի պատրաստում պատրաստում B-15 դասի բետոնից	$մ^3$	1.05600	36.75900	38.81750
88	Թերթապողպատի տեղադրում 80x80x6մմ	տն	0.01990	409.93600	8.15569
89	40x40x2սս, 30x60x2սմ մետաղական խողովակներից 40x40x4մմ թերթապողպատից բազրիքների տեղադրում	գմ	99.00000	1.81900	180.08100
90	40x40x2մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	297.00000	0.61300	182.06100
91	30x60x2մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	99.00000	0.68200	67.51800
92	40x40x4սմ թերթապողպատից արժեքը	տն	0.03979	341.33700	13.58183
93	Մետաղական մակերևույթների 2 շերտ յուղաներկում	տն	0.99415	23.07000	22.93504
	Ոռոգման ցանց				
94	Պոլիէթիլ. խողովակի տեղադրում Ф51x3մմ փորձարկումով	գմ	57.00000	1.55400	88.57800

95	Պողպատե խողովակի տեղադրում Φ25x3մմ փորձարկումով	գմ	32.00000	0.91400	29.24800
96	Խողովակաշարի լվացում վարակազերծումով	կմ	0.08900	49.74800	4.42757
97	Ոռոգման ծորակների տեղադրում Φ25մմ	հատ	7.00000	3.25500	22.78500
98	Պողպատե ձեւավոր մասերի տեղադրում	տ	0.01350	1014.07500	13.69001
99	Ոռոգման դատարկման ծորակների տեղադրում Φ50մմ	հատ	2.00000	21.94700	43.89400
100	Պողպատե կցաշուրթի տեղադրում Φ50մմ	հատ	4.00000	2.87800	11.51200
101	Փականների տեղադրում Φ25սա	հատ	3.00000	3.06600	9.19800
102	Խողովակների 2 շերտ յուղաներկում	$մ^2$	14.60000	0.83800	12.23480
	Էլեկտրալուսավորություն				
103	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	$մ^3$	2.40000	3.10800	7.45920
104	Բնահողի եռյիցք ձեռքով	$մ^3$	1.12000	0.69700	0.78064
105	Ավելորդ բնահողի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	2.36800	2.49200	5.90106
106	Կեռային հիմքերի պատրաստում պատրաստում B 15 դասի բետոնից	$մ^3$	1.28000	36.75900	47.05152
107	133x4սա մետաղական խողովակի տեղադրում բետոնի մեջ	տն	0.04074	68.60500	2.79469
108	133x4սա մետաղական խողովակի արժեքը	գմ	3.20000	4.30500	13.77600
109	Մետաղական խողովակներից հենասյուների տեղադրում	հատ	4.00000	10.56900	42.27600
110	102x4մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	27.20000	3.25700	88.59040
111	32x3մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	4.00000	0.74800	2.99200
112	Մետաղական մակերեսների 2 շերտ յուղաներկում	տն	0.27162	23.07000	6.26637
113	Լուսատու յուսադիոդային 1x85վտ	հատ	4.00000	19.28000	77.12000
114	ԱԲԲԳ 4x16մմ2 մալուխի անցկացում օդով ճոպանով	գմ	130.00000	0.91200	118.56000
115	ԱԲԲԳ 2x2.5մմ2 մալուխի անցկացում	գմ	20.00000	0.17900	3.58000
116	Ճոպանի արժեքը	գմ	130.00000	0.20000	26.00000

117	Մեկուսիչ ՏՖ-20	հատ	4.00000	0.43300	1.73200
118	Մեկուսիչ Ընկույզ	հատ	4.00000	0.60100	2.40400
	Ընդամենը				4641.572
	Սարքավորումներ /նստարաններ, աղբամաններ, մետ.սեղան, մարզասարքեր, մանկական խաղեր/				571.00
	ԱԱՀ	20%			928.314
	Ընդամենը				5569.886

Պատվիրատու
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900032313174
ՀՎՀՀ 02593108

Գ. Չթոյան _____
(ստորագրություն)
Կ.Տ

Կապալառու
«ՍՄԱԼԱ» ՍՊԸ
Ք. Երևան, Ռուբինյանց 16/1 բն. 20
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 11500801319100
ՀՎՀՀ 00848343

Ա. Ավանեսյան _____
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված թիվ 2
«11 » ապրիլի 2018 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ << ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/64-2> գնման պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

« Արաբկիր վարչական շրջան Ն. Զարյան 15 շենքի հարակից տարածքի բարեկարգում »
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	Արաբկիր վարչական շրջան Ն. Զարյան 15 շենքի հարակից տարածքի բարեկարգում	Պայմանագիրը ուժի մտնելու օրը:	Կատարման նախընտրելի ժամկետը է սահմանվում՝ մինչև 31.07.2018թ
ԸՆԴԱՄԵՆԸ			

Պատվիրատու
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900032313174
ՀՎՀՀ 02593108

Գ. Չթրյան ____________
(ստորագրություն)
Կ.Տ

Կապալառու
«**Կապալառու**
«ՍՄԱԼԱ» ՍՊԸ
Ք. Երևան, Ռուբինյանց 16/1 բն. 20
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 11500801319100
ՀՎՀՀ 00848343

Ա. Ավանեսյան ____________
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 3
«11» ապրիլի 2018 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ << ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/64-2> գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հերթական համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում՝**									
			ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45600000	Արարկիր վարչական շրջան Ն. Զարյան 15 շենքի հարակից տարածքի բարեկարգում	4 397 281	4 397 281	4 397 281	5 569 886	5 569 886	5 569 886	5 569 886	5 569 886	5 569 886	5 569 886

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

Պատվիրատու
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900032313174
ՀՎՀՀ 02593108

Գ. Զաքրյան
Ստորագրություն
Կ.Տ

Կապալառու
«ՍՄԱԼԱ» ՍՊԸ
Ք. Երևան, Ռուբինյանց 16/1 բն. 20
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 11500801319100
ՀՎՀՀ 00848343

Ա. Ավանեսյան
Ստորագրություն
Կ.Տ

Հավելված թիվ 4
«11» ապրիլի 2018 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ << ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/64-2> գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
_____	_____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «___» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս _____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «___» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	Կատարված աշխատանքի քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
«11» ապրիլի 2018 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ << ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/64-2> գնման պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____ -ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____ -ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____ -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ *«ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/64-2»*

(պայմանագրի կատարման ապահովում)

ք. Երևան

«11» ապրիլի 2018 թ.**

«ՍՄԱԼԱ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Ավանեսյանի (անձ.ԱՆ 0578631 տրված 22.07.2013թ. 007-ի կողմից) որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը **Համաձայնության առարկան**

1.1 Ընկերությունը մասնակցում է **Երևանի քաղաքապետարան** (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ *«ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/64»* ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն << կենտրոնական բանկի հաստատած՝ <<Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների>>:

1.3 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը (այսուհետ՝ պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիր) ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին (այսուհետ՝ Բանկ)՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը:

1.4 Բանկը պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը ընդունում է կատարման՝ Պատվիրատուի կողմից սույն տուժանքի համաձայնագրի և գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման փաստը հաստատող փաստաթղթի բնօրինակները, որոնք նշվում են պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում, Բանկին տրամադրվելու դեպքում:

1.5 Պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

1.6 Սույն համաձայնագիրը և կից պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱԲՐԱՍ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

1. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և վավեր է Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունները ողջ ծավալով կատարելու վերջին օրվան հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

Կապալառու

«ՍՄԱԼԱ» ՍՊԸ

Ք. Երևան, Ռուբինյանց 16/1 բն. 20

«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ

Հ/Հ 11500801319100

ՀՎՀՀ 00848343

Ա. Ավանեսյան

(ստորագրություն)

Կ. Տ

1.

ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ[1] N

(պայմանագրի կատարման ապահովում)

2. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

3. Ընկերություն (այսուհետ՝ վճարող)՝ «ՍՄԱԼԱ» ՍՊԸ

4. Վճարողի բանկը՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ

5. Վճարողի հաշվի համարը՝ Հ/Հ 11500801319100

6. Վճարողի ՀՎՀՀ՝ 00848343

7. Վճարողի ՀԾՀ՝

8. Շահառու՝ Երևանի քաղաքապետարան

9. Շահառուի ՀՎՀՀ՝ 02593108

10. Շահառուի բանկը՝ Կենտրոնական գանձապետարան

11. Շահառուի հաշվի համարը /հշ.N/ 900015211429

12.Գումարը թվերով և բառերով՝ **559989.0/հինգ հարյուր հիսունինը հազար ինը հարյուր ութսունինը/**

13.Արժույթը (բառերով և կոդով)՝)՝ ՀՀ դրամ AMD

14.Գործարքի /վճարման/ նպատակը՝ *պայմանագրի կատարման ապահովում*

15.Պայմանագրի ծածկագիրը՝ *ԵՔ ԲՄԱՇՁԲ 18/64 2*

16.Փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանը

17. կից՝ --- էջ

19.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/	18.ա. Վճարողի ստորագրությունները՝ Ա. Ավանեսյան /_____/ /_____/
19.բ. Կ.Տ.	18.բ. Կ.Տ.
Կատարված է շահառուի բանկի կողմից	Կատարված է վճարողի բանկի կողմից
20.ա. /_____/ /ստորագրություն/	21.ա. /_____/ /ստորագրություն/
20.բ. Կ.Տ.	21.բ. Կ.Տ.
"___" ___ 20___ թ.	22.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

[1] *Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր մասերի և լրացման կարգի*